ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-Դ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ք. Երևան «29» 07 2022 թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս Կոմիտեի նախագահ Վահագն Գևորգյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ջրառ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության տնօրեն Արտաշես Աբգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով 2022 թվականի հունիսի 9-ի «2021 թվականին Սևանա լճից բաց թողնվող ջրի 170 մլն մ^3-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրաէներգիայի վաճառքից ստացված լրացուցիչ գումարների հաշվին բացված արտաբյուջետային հաշվի միջոցների գոյացման և ծախսման նախահաշիվը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետությա կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 850-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պետական մարմինն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի շրջանակներում 9025 ծրագրի 12001 միջոցառման ***«Աջակցություն ոռոգման համակարգերի հիմնանորոգմանը» 04.02.04.28*** տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» 4656 հոդվածով Ընկերությանը հատկացնել 1 452 336 900 (մեկ միլիարդ չորս հարյուր հիսուներկու միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր) դրամ գումար համապատասան մուտքերի առկայության դեպքում, իսկ Ընկերությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել ՀՀ Կառավարության 09.06.2022 թվականի N850-Ն որոշմամբ և Պայմանագրով նախատեսված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված է սույն պայմանագրի հավելված N1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Ընկերության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Ընկերությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Ընկերությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Ընկերությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5 Ընկերության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է www.scws.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած Ընկերությունը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքված կազմակերպության էլեկտրոնային փոստին:

2.2. Ընկերությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. Ընկերությունը կարող է ծրագիրն իրականացնել ինչպես ՀՀ Կառավարության 09.06.2022 թվականի 850-Ն որոշմամբ տրամադրված, այնպես էլ այլ միջոցների հաշվին:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Ընկերությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Ընկերությանը:

2.3.5 դրամաշնորհի հատկացման պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում պայմանագիր կնքած Ընկերության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են Պետական մարմնի ինտերնետային կայքէջում:

2.3.6 Ընկերությունը, որի հետ կնքվել է դրամաշնորհի հատկացման պայմանագիր, պայմանագրով նախատեսված ժամկետներում Պետական մարմնին ներկայացնում է ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է Պետական մարմնի պաշտոնական՝ www.scws.am

ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերվող դրամաշնորհային պայմանագրերի:

2.4. Ընկերությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի և ՀՀ Կառավարության 09.06.2022 թվականի N850-Ն որոշման դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 25-ը, իսկ ծրագրի ավարտից հետո մինչև՝ 30-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.

2.4.5. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Ընկերությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9 Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները դրամաշնորհ ստացած Ընկերությունը մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.4.10 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները(խնայողությունները) Ընկերությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և(կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Ընկերությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Ընկերությանը վճարումները կատարվում են Պետական մարմին ներկայացվող հանձնման-ընդունման ակտերի և այլ փաստաթղթերի հիման վրա՝ միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Ընկերությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում ընկերությունից գանձվում է տուգանք՝ կոնկրետ ժամանակահատվածում առանձին միջոցառումների (օբյեկտների) գծով ներկայացված հաշվետվությունների արդյունքում ձևավորված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Ընկերությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կոնկրետ ժամանակահատվածում առանձին միջոցառումների (օբյեկտների) գծով ներկայացված հաշվետվությունների արդյունքում ձևավորված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում Ընկերությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում վերջինիս նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և տարածվում 2022 թվականի հունիսի 30-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է միջև ՀՀ Կառավարության 09.06.2022 թվականի N850-Ն որոշմամբ և սույն Պայմանագրով կողմերի միջև ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ՏԿԵՆ Ջրային Կոմիտե	«Ջրառ» ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 13ա	Վարդանանց փակուղի 8ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Արդշինբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	h/h 2479000059160030
h/h 900013001228	ՀՎՀՀ 00093621
ՀՎՀՀ 02555816	«Ջրառ» ՓԲԸ տնօրեն
ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահ	
_____Վ. Գևորգյան	_____Ա. Աբգարյան

Հավելված
2022 թ. 07 29 -ին
կնքված N 1-Դ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը
1	Աջակցություն ոռոգման համակարգերի հիմնանորոգմանը	Արտաշատի ջրանցքի հիմնանորոգում	Աջակցություն ոռոգման համակարգերի հիմնանորոգմանը	Ջրանցքների և գլխամասային հանգույցի հիմնանորոգում	<< Կառավարության 09.06.2022 թվականի N850-Ն որոշմամբ և Պայմանագրով նախատեսված կարգով:	162 750 600
2		Արտաշատի ջրանցքի և գլխամասային հանգույցի հիմնանորոգում				189 432 000
3		Ստորին Հրազդան ջրանցքի 1-ին հերթ, գլխամասային հանգույցի հիմնանորոգում				144 939 300
4		Ստորին Հրազդան ջրանցքի 2-րդ հերթի հիմնանորոգում				217 318 400
5		Արզնի-Շամիրամ ջրանցքի 1-ին հերթի հիմնանորոգում				314 920 100
6		Արզնի-Շամիրամ ջրանցքի 2-րդ հերթի հիմնանորոգում				422 976 500
ԸՆԴԱՄԵՆԸ						**1 452 333 900**